

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Չբացառելով սույն Պայմանագրով նախատեսված այլ պարտավորությունները, «ԱՎԾ-ի պարտավորություններ» արտահայտությունը ներառում է ստորև թվարկվող բոլոր պարտավորությունները.

1. Ընդհանուր պարտավորություններ

1.1 ԱՎԾ-ն պարտավոր է իրականացնել Հայաստանի Կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն (ԿՄԱՀ) և մշակել ստացված տվյալները, ընդ որում, ԿՄԱՀ-ը պետք է համապատասխանի Հազարամյակի մարտահրավերի հիմնադրամի (ՀՄՀ) ծրագրի շրջանակներում տնային տնտեսությունների ընթացիկ հետազոտությունների համար նախատեսված մոնիտորինգի և գնահատման պահանջներին: Հետազոտության արդյունքները վերլուծվելու են մոնիտորինգի և գնահատման կապալառուների կողմից՝ վիճակագրական առաջավոր մեթոդների հիման վրա գյուղական աղքատության կրճատումը ստույգորեն չափելու և շահառուների վրա ծրագրի ազդեցությունը պարզելու համար:

1.2 ԱՎԾ-ն պարտավոր է ԱՎԾ-ի պարտավորությունները կատարելիս համագործակցել ՀՄՀ-Հայաստանի ներկայացուցիչների, այդ թվում՝ մասնագիտական եզրակացություններ կայացնելու համար ՀՄՀ-Հայաստանի կողմից հրավիրված փորձագետների հետ:

1.3 ԱՎԾ-ն պարտավոր է ՀՄՀ-Հայաստանի ողջամիտ պահանջով տրամադրել կատարվող աշխատանքին վերաբերող ցանկացած պարզաբանում, հավաստագիր և այլ փաստաթուղթ:

1.4 Եթե տեղի է ունենում որևէ շեղում Աշխատանքի շրջանակներից և ԱՎԾ-ի այլ պարտավորություններից, ապա ԱՎԾ-ն պարտավոր է համապատասխան քայլեր ձեռնարկել շեղումները վերացնելու համար, այդ թվում՝ ՀՄՀ-Հայաստանի կողմից ողջամտորեն ուղղորդվող քայլեր:

2. Տվյալների մշակման պարտավորություններ

2.1 Գյուղական ճանապարհների վերականգնման բաղադրիչի համար մշակվելու են ազդեցության հետևյալ հիմնական ցուցանիշները.

Աղքատության մակարդակը գյուղական վայրերում,

Աղքատության մակարդակը գյուղական վայրերում ըստ հարցվողների պատկերացումների /perceived poverty/

Գյուղական վայրերում գյուղատնտեսությունից ստացվող իրական եկամուտների փոփոխությունը,

Գյուղական տնային տնտեսությունների ոչ գյուղատնտեսական եկամուտների փոփոխությունը, և

Գյուղական վայրերում հասարակական տրանսպորտից բավարարվածությունը:

2.2 Ոռոգման ենթակառուցվածքի բաղադրիչի համար մշակվելու են ազդեցության հետևյալ հիմնական ցուցանիշները.

Աղքատության մակարդակը գյուղական վայրերում,

Աղքատության մակարդակը գյուղական վայրերում ըստ հարցվողների պատկերացումների /perceived poverty/

Գյուղական վայրերում գյուղատնտեսությունից ստացվող իրական եկամուտների փոփոխությունը, և

Բավարարվածությունը ոռոգման ծառայություններից (այդ թվում՝ հասանելիությունը և հուսալիությունը):

3. Հետազոտությունների իրականացումը

3.1 Աշխատանքային պլանները: ԱՎԾ-ն պարտավոր է Համաձայնագրի ֆինանսավորման շրջանակներում իրականացվելիք հետազոտությունների համար մշակել և իրագործել տարեկան աշխատանքային պլաններ: [Ժամանակացույցերը պետք է ներկայացվեն ՀՄՀ-Հայաստանին ՀՀ յուրաքանչյուր ֆինանսական տարվա սկզբից երեք (3) ամիս առաջ: Աշխատանքային պլանները պետք է պարունակեն այն ամսաթվերը, որոնց դրությամբ Հետազոտության իրականացման առաջադրանքների (3.2 և 3.3 կետերով սահմանված) յուրաքանչյուր բաղադրիչը պետք է ավարտված լինի]:

3.2. Հետազոտության կառուցվածքը: Հետազոտությունը վերլուծության նպատակով օգտագործվելու է ԱՎԾ-ի, ՀՄԿ-ի, ՀՄՀ-Հայաստանի և նրանց կողմից նշանակված փորձագետների կողմից և ներառելու է ՀՄՀ Համաձայնագրի շրջանակներում կատարվող աշխատանքների վերաբերյալ լրացուցիչ հարցեր, որոնք հնարավորություն կտան գնահատել գյուղական ճանապարհների վերականգնումը և ոռոգման ենթակառուցվածքի բարելավումը: ԱՎԾ-ն պարտավոր է հետևել ստորև թվարկված ուղենիշներին.

Ընտրանքը պետք է առնվազն. (1) երկու անգամ մեծ լինի 2004 թ. գյուղական համայնքների համար կիրառված ընտրանքից, (2) հավասար լինի 2004 թ. քաղաքային համայնքների համար կիրառված ընտրանքից, և (3) հավասար լինի 2006թ. Երևանի համար կիրառված ընտրանքին (բացառությամբ երբ այն կավելացվի առանձին ֆինանսավորման հաշվին), և պետք է թարմացվի և գյուղական, և քաղաքային բնակավայրերի համար՝ արտացոլելու վերջին մարդահամարից ի վեր տեղ գտած փոփոխությունները:

ԿՄԱՀ հետազոտության կառուցվածքը պետք է լինի նույնը, ինչ 2004թ. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացված հետազոտության կառուցվածքը, ներառյալ բոլոր մոդուլները, սակայն՝ թարմացված, որպեսզի արտացոլի 2006թ. հետազոտության կառուցվածքի բարելավման արդյունքով առաջացած փոփոխությունները: 2004թ. հարցերից մի քանիսը պետք է փոփոխվեն ՀՄԿ-ի, ՀՄՀ-Հայաստանի և նրանց կողմից նշանակված փորձագետների առաջարկությունների հիման վրա՝ քննարկելով այդ փոփոխությունները ԱՎԾ-ի հետ, և նպատակ հետապնդելով բարելավել ծրագրի ազդեցության գնահատումը, այդ թվում՝ ոռոգման և հասարակական տրանսպորտից բավարարվածության վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև Համաձայնագրի Ջրից մինչև շուկա բաղադրիչի շրջանակներում առաջարկված՝ ջրի ներտնտեսային կառավարման բարելավված մեթոդների կիրառության փաստը:

Ազդեցության գնահատման համար որպես ելակետ պետք է ծառայեն ԱՎԾ-ի կողմից նախկինում անցկացված տնային տնտեսությունների հետազոտությունները, ինչպես նաև 2007թ. ընդլայնված ԿՄԱՀ-ը: Ծրագրի գնահատումը հիմնված կլինի ենթածրագրերի իրականացումից առաջ և հետո Ծրագրի ազդեցությունը կրող և չկրող տնային տնտեսությունների 2008-2011 թվականների հետազոտությունների վրա:

3.3 Հետազոտության առաջադրանքները: ԱՎԾ-ն պարտավոր է 2007-2011 թվականների ընթացքում պահանջվող հետազոտությունները տարեկան կտրվածքով իրականացնելու համար կատարել հետևյալ առաջադրանքները.

3.3.1 ԿՄԱՀ

- ԿՄԱՀ հետազոտության հարցաթերթիկի բովանդակության համաձայնեցում ՀՄՀ-Հայաստանի և ՀՄԿ-ի հետ
- ԿՄԱՀ-ի լրացուցիչ հարցերի նախնական փորձարկում
- ԿՄԱՀ-ի հետազոտության կառուցվածքի վերջնական հաստատում
- Համայնքների վերացուցակագրում՝ ապահովելու ժողովրդագրական միտումների արտացոլումն ընտրանքի մեջ

- Հարցազրուցավարների վերապատրաստում (վերապատրաստման նյութերի նախապատրաստում)
- Հետազոտության անցկացում/որակի վերահսկողություն (տարվա ընթացքում ըստ ժամանակացույցի)
- Տվյալների մուտքագրում և տվյալների ստուգում
- Վերլուծական ֆայլերի ստեղծում
- Աղքատության ցուցանիշների (օրինակ, սրության, ճեղքվածքի, աղքատ մարդկանց հաշվարկի) մշակում
- Չխմբագրված ֆայլերի տրամադրում ՀՄՀ-Հայաստանին, ՀՄԿ-ին և նրանց կողմից նշանակված փորձագետներին, որոնք պետք է աջակցեն ԱՎԾ-ին Համաձայնագրի գնահատման համար միկրո տվյալների ֆայլերի համապատասխանեցման և խմբագրման գործում
- Լիովին խմբագրված և փաստաթղթավորված միկրո տվյալների ֆայլերի տրամադրում ՀՄՀ-Հայաստանին, ՀՄԿ-ին և նրանց կողմից նշանակված փորձագետներին և համաձայնեցված ձևաչափով, այդ թվում՝ առանձին համայնքների նույնականացման ծածկագրերով և այն ֆայլերով, որոնք կարելի կլինի համադրել համայնքային հետազոտության տվյալներին՝ Ծրագրի արդյունքների մանրակրկիտ աշխարհագրական վերլուծություն անցկացնելու նպատակով
- Աղքատության հաշվետվության նախագծի պատրաստում
- Աղքատության հաշվետվության վերջնական տարբերակի պատրաստում (տպագրություն)

3.4 **Տվյալների տրամադրում:** ԱՎԾ-ն պարտավոր է ՀՄՀ-Հայաստանին, ՀՄԿ-ին և նրանց կողմից նշանակված փորձագետներին տրամադրել հետևյալ տվյալները.

Յուրաքանչյուր հետազոտությունն ավարտելուց հետո 10 ամսվա ընթացքում /ԿՄԱՀ-ի դեպքում հոկտեմբերի վերջում/՝ Համաձայնագրի III հավելվածով և ՄԳ պլանով սահմանված հետևյալ ցուցանիշների վերաբերյալ տվյալներ.

- (i) Աղքատության մակարդակը գյուղական վայրերում,
- (ii) Աղքատության մակարդակը գյուղական վայրերում ըստ հարցվողների պատկերացումների /perceived poverty/
- (iii) Գյուղական վայրերում գյուղատնտեսությունից ստացվող իրական եկամուտների փոփոխությունը,
- (iv) Գյուղական վայրերում ոչ գյուղատնտեսությունից ստացվող իրական եկամուտների փոփոխությունը,
- (v) Գյուղական վայրերում հասարակական տրանսպորտից բավարարվածությունը,
- (vi) Ոռոգման ծառայություններից բավարարվածների տոկոսը:

Յուրաքանչյուր հետազոտության ավարտից հետո 6 ամսվա ընթացքում / ԿՄԱՀ-ի դեպքում հունիսի վերջում/՝ միկրո տվյալների չխմբագրված ֆայլերը, ներառյալ առանձին համայնքների նույնականացման նշանները, պետք է տրամադրվեն ՀՄՀ-Հայաստանին և ՀՄԿ-ին, որպեսզի վերջիններս և նրանց կողմից նշանակված փորձագետները դրանք օգտագործեն համայնքային հետազոտությունների մեթոդաբանություն մշակելու համար, և օգնեն ԱՎԾ-ին Համաձայնագրի գնահատման նպատակով միկրո տվյալների ֆայլերի խմբագրման գործում, Յուրաքանչյուր հետազոտության ավարտից հետո 10 ամսվա ընթացքում /ԿՄԱՀ-ի դեպքում հոկտեմբերի վերջում/՝ միկրո տվյալների լիովին խմբագրված և փաստաթղթավորված ֆայլերը, ներառյալ առանձին համայնքների նույնականացման

նշանները, պետք է տրամադրվեն ՀՄՀ-Հայաստանին և ՀՄԿ-ին, որպեսզի վերջիններս և նրանց կողմից նշանակված փորձագետները դրանք օգտագործեն Ծրագրի արդյունքների մանրակրկիտ աշխարհագրական վերլուծության համար՝ համադրելով համայնքային հետազոտության տվյալներին:

3.5 Տվյալների հրապարակումը: Բոլոր հաշվետվությունները, միկրո տվյալների ֆայլերը և փաստաթղթերը (առանց նույնականացման նշանների) հասանելի կլինեն հանրությանը տվյալների վերջնական խմբագրված ֆայլերը ՀՄԿ-ին, ՀՄՀ-Հայաստանին և/կամ նրանց կողմից նշանակված փորձագետներին՝ հասանելի դառնալուց հետո ամենաուշը վեց ամսվա ընթացքում:

3.6 Առաջընթացի հաշվետվություններ: ԱՎԾ-ն պարտավոր է նաև հետազոտության իրականացման ընթացքում ներկայացնել առաջընթացի մասին համառոտ, գրված եռամսյակային հաշվետվություններ եռամսյակի ավարտից հետո՝ 15 օրվա ընթացքում՝ դրանցում ներկայացնելով ժամանակացույցով նախատեսված աշխատանքների իրականացման առաջընթացը և արձանագրված հիմնախնդիրները: Առաջընթացի հաշվետվությունները սկզբնական ստացման պահին կհամարվեն նախագծեր: Նախագծերը կուսումնասիրվեն և կընդունվեն, կամ դրանց վերաբերյալ կներկայացվեն դիտողություններ/առաջարկություններ ստացումից հետո երկու շաբաթվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ: ԱՎԾ-ն պարտավոր է համապատասխան կերպով արձագանքել ՀՄԿ-ի և ՀՄՀ-Հայաստանի դիտողություններին և պահանջվող վերջնական հաշվետվությունները ներկայացնել ՀՄԿ-ի և ՀՄՀ-Հայաստանի պատասխանները ստանալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում: